



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 154-Ա

ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման  
մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով.

համ

այնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Բաղրամյան համայնքի ավագանու 2022  
թվականի դեկտեմբերի 21-ի՝ թիվ 13 արտահերթ նիստի օրակարգը՝  
համաձայն հավելվածի :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից :

Կողմ -19

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈՐՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ



Հավելված  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի  
Բաղրամյան համայնքի ավագանու  
2022 թվականի դեկտեմբերի 21-ի  
Թիվ 13 արտահերթ նիստի 154-Ա որոշման



1, ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի ԹԻՎ 13  
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Շ. Առաքելյան

2, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Ա. Խաչատրյան

3, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ &lt;&lt;  
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ&gt;&gt; ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Ա. Խաչատրյան

4, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ  
ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Շ. Առաքելյան

5, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
<<ՔԱՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ  
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Ա. Խաչատրյան

6, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Շ. Առաքելյան

7, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023  
ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Շ. Առաքելյան

8, <<ԵՐԵՎԱՆ ՄԱՐՄԸԼԵՅԴ ԻՆԴՐՍԹՐԻՍ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱԴՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

9. <<ԵՐԵՎԱՆ ՄԱՐՄԸԼԵՅԴ ԻՆԴԵՍԹՐԻՍ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

10. <<ԵՐԵՎԱՆ ՄԱՐՄԸԼԵՅԴ ԻՆԴԵՍԹՐԻՍ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

11. <<ԵՐԵՎԱՆ ՄԱՐՄԸԼԵՅԴ ԻՆԴԵՍԹՐԻՍ>> ՍՊԸ-Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Տ. ՂԱԶԱՐՅԱՆ

12. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ  
ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Շ. Առաքելյան

13. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Մ. ՀԱՐԹԵՆՅԱՆ

14. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ  
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ձեկուցող՝

Ա. Խաթատրյան





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 155-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ << ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ >>  
ՀԱՄԱՅԱՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք  
ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

### համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան  
համայնքի ենթակայության տակ գտնվող << ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ  
>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների  
թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն  
հավելվածի 1,2,3-ի:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -19

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱԿԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ


ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ 1  
 ԲԱՐՈՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
 ԹԻՎ 155-Ա ՈՐՈՇՄԱՆ




ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՈՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԲԱՐՈՎԱՆԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՅՆԵՐԻ  
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը                | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|----------------------------------|--------------------|------------------------|
| 1        | Երաժշտական դպրոցի տնօրեն         | 0.5                | 120 000                |
| 2        | Հաշվապահ                         | 0.5                | 105 000                |
| 3        | Երաժշտական դպրոցի դաշնակահար     | 1                  | 105 000                |
| 4        | Երաժշտական դպրոցի դիոլի ուսուցիչ | 1                  | 105 000                |
| 5        | Երաժշտական դպրոցի հավաքարար      | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                                  | 4                  | 427500                 |

ՀԱՎԵԼՎԱԾ 2  
 ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
 ԹԻՎ 155-Ա ՈՐՈՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԼԵՌՆԱԳՈԳ ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը        | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|--------------------------|--------------------|------------------------|
| 1        | Երաժշտական դպրոցի տնօրեն | 1                  | 120 000                |
| 2        | Հաշվապահ                 | 1                  | 105 000                |
| 3        | Երաժիշտներ               | 4                  | 105 000                |
| 4        | Հավաքարար                | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                          | 7                  | 750000                 |



ՀԱՎԵԼՎԱԾ 3  
 ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ԱԻՍՏԻ  
 ԹԻՎ 155-Ա ԲԸՌՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԴԱԼԱՐԻԿԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը        | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|--------------------------|--------------------|------------------------|
| 1        | Երաժշտական դպրոցի տնօրեն | 1                  | 120 000                |
| 2        | Հաշվապահ                 | 4                  | 105 000                |
| 3        | Երաժիշտներ               | 1                  | 105 000                |
| 4        | Հավաքարար                | 1                  | 105 000                |
| 5        | Պահակ                    | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                          | 8                  | 855000                 |



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 156-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ >>  
ՀԱՄԱՅԱՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ  
ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻԿԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի առաջին մասի 28-րդ կետով և հիմք  
ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

*համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան  
համայնքի ենթակայության տակ գտնվող << ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ >> համայնքային ոչ  
առևտրային կազմակերպությունների աշխատակիցների  
թվաքանակը, հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն  
հավելված 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8-ի:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -19

Դեմ -0






Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ



ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ  
 ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ  
 ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ  
 ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ  
 ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ  
 ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ  
 ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ  
 ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ  
 ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ  
 ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ  
 ՄԿՐՏՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ  
 ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ  
 ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ  
 ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ  
 ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ  
 ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ  
 ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



ՇԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ



ՀԱՎԵԼՎԱԾ 1  
 ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՎՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
 ԹԻՎ 156 - Ա ՈՐՈՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ՇԵՆԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը     | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|-----------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն   | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ              | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր             | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ             | 2.5                | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական    | 2.2                | 120 000                |
| 6        | Հաշվապահ              | 0.5                | 105 000                |
| 7        | Երաժշտության ուսուցիչ | 0.5                | 105 000                |
| 8        | Տնտեսվար              | 0.5                | 105 000                |
| 9        | Խոհարար               | 1                  | 105 000                |
| 10       | Խոհարարի օգնական      | 0.5                | 105 000                |
| 11       | Լվացարար              | 0.25               | 105 000                |
| 12       | Հավաքարար             | 0.5                | 105 000                |
| 13       | Օժանդակ բանվոր        | 0.5                | 105 000                |
| 14       | Պահակ                 | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                       | 11.7               | 1 580 000              |



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԴԱԼԱՐԻԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը   | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|---------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ            | 1                  | 130 000                |
| 3        | Բուժքույր           | 0.75               | 105 000                |
| 4        | Դաստիարակ           | 5                  | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական  | 4.4                | 120 000                |
| 6        | Հաշվապահ            | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժշտական ղեկավար  | 1                  | 130 000                |
| 8        | Տնտեսվար            | 0.5                | 105 000                |
| 9        | Խոհարար             | 1                  | 120 000                |
| 10       | Խոհարարի օգնական    | 1                  | 105 000                |
| 11       | Լվացարար            | 0.25               | 105 000                |
| 12       | Հավաքարար           | 0.5                | 105 000                |
| 13       | Օժանդակ բանվոր      | 0.5                | 105 000                |
| 14       | Դռնապահ             | 0.5                | 105 000                |
| 15       | Պահակ               | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                     | 18.9               | 1 740 000              |





ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ՔԱՐԱԿԵՐՏ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը         | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|---------------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն       | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ                  | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր                 | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ                 | 2.5                | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական        | 2.2                | 120 000                |
| 6        | Հաշվապահ                  | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժիշտ /դաշնակահար/      | 0.5                | 130 000                |
| 8        | Պարուսույց /պարի խմբավար/ | 0.5                | 105 000                |
| 9        | Խոհարար                   | 1                  | 120 000                |
| 10       | Խոհարարի օգնական          | 0.5                | 105 000                |
| 11       | Լվացարար                  | 0.25               | 105 000                |
| 12       | Հավաքարար                 | 0.5                | 105 000                |
| 13       | Օժանդակ բանվոր            | 0.5                | 105 000                |
| 14       | Տնտեսվար                  | 0.5                | 105 000                |
| 15       | Պահակ                     | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                           | 12.2               | 1 740 000              |



ՀԱՎԵԼՎԱԾ 4  
 ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ԵԻՄՏԻ  
 ԹԻՎ 156 - Ա ՈՐՈՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԼԵՈՒՆԱԳՈԳԻ ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶ» ՀՈԱԿ- Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը   | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|---------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ            | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր           | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ           | 2.5                | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական  | 2.2                | 120 000                |
| 6        | Հաշվապահ            | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժիշտ             | 0.5                | 130 000                |
| 8        | Խոհարար             | 1                  | 120 000                |
| 9        | Խոհարարի օգնական    | 0.5                | 105 000                |
| 10       | Լվացարար            | 0.25               | 105 000                |
| 11       | Հավաքարար           | 0.5                | 105 000                |
| 12       | Օժանդակ բանվոր      | 0.5                | 105 000                |
| 13       | Տնտեսվար            | 0.5                | 105 000                |
| 14       | Պահակ               | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                     | 11.7               | 1 635 000              |



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ՎԱՆԱՆԴԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը    | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|----------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն  | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ             | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր            | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ            | 2.5                | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական   | 2.2                | 120 000                |
| 6        | Հաշվապահ             | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժիշտ /դաշնակահար/ | 0.5                | 130 000                |
| 8        | Խոհարար              | 1                  | 120 000                |
| 9        | Խոհարարի օգնական     | 0.5                | 105 000                |
| 10       | Լվացարար             | 0.25               | 105 000                |
| 11       | Հավաքարար            | 0.5                | 105 000                |
| 12       | Օժանդակ բանվոր       | 0.5                | 105 000                |
| 13       | Տնտեսվար             | 0.5                | 105 000                |
| 14       | Պահակ                | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                      | 11.7               | 1 635 000              |



ՀԱՎԵԼՎԱԾ 6  
 ԲԱՐՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
 ԹԻՎ 156 - Ա ՈՐՈՇՄԱՆ




ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՐՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԱՐԳԻՆԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՐ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը   | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|---------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ            | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր           | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ           | 1.25               | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական  | 1.1                | 120 000                |
| 6        | Հաշվապահ            | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժիշտ             | 0.25               | 105 000                |
| 8        | Խոհարար             | 1                  | 120 000                |
| 9        | Խոհարարի օգնական    | 0.5                | 105 000                |
| 10       | Հավաքարար           | 0.5                | 105 000                |
| 11       | Օժանդակ բանվոր      | 0.25               | 105 000                |
| 12       | Տնտեսվար            | 0.25               | 105 000                |
| Ընդամենը |                     | 7,35               | 1 400 000              |

ՀԱՎԵԼՎԱԾ 7  
 ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ  
 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի  
 ԹԻՎ 13 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ  
 ԹԻՎ 156 - ԱՌՈՐՇՄԱՆ



ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԲԱՐԱԿԵՐՏԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ  
 ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը    | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|----------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն  | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ             | 0.5                | 130 000                |
| 3        | Բուժքույր            | 0.75               | 105 000                |
| 4        | Դաստիարակ            | 3.75               | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական   | 3.3                | 120 000                |
| 6        | Հաշվապահ             | 0.5                | 120 000                |
| 7        | Երաժիշտ /դաշնակահար/ | 0.75               | 130 000                |
| 8        | Պարուսույց           | 0.5                | 105 000                |
| 9        | Խոհարար              | 1                  | 120 000                |
| 10       | Խոհարարի օգնական     | 0.5                | 105 000                |
| 11       | Լվացարար             | 0.25               | 105 000                |
| 12       | Հավաքարար            | 0.5                | 105 000                |
| 13       | Օժանդակ բանվոր       | 0.5                | 105 000                |
| 14       | Տնտեսվար             | 0.5                | 105 000                |
| 15       | Պահակ                | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                      | 15.3               | 1 740 000              |





ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

«ԵՐՎԱՆԴԱՇԱՏ ՄԱՆԿԱԴԱՐՏԵԶ» ՀՈԱԿ- Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,  
 ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| h/h      | Հաստիքի Անվանումը     | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը |
|----------|-----------------------|--------------------|------------------------|
| 1        | Մանկապարտեզի տնօրեն   | 1                  | 150 000                |
| 2        | Մեթոդիստ              | 0.25               | 130 000                |
| 3        | Բուժքույր             | 0.5                | 105 000                |
| 4        | Դաստիարակ             | 2.5                | 130 000                |
| 5        | Դաստիարակի օգնական    | 2.2                | 120 000                |
| 6        | Հաշվապահ              | 0.5                | 105 000                |
| 7        | Երաժշտության ուսուցիչ | 0.5                | 105 000                |
| 8        | Տնտեսվար              | 0.5                | 105 000                |
| 9        | Խոհարար               | 1                  | 105 000                |
| 10       | Խոհարարի օգնական      | 0.5                | 105 000                |
| 11       | Լվացարար              | 0.25               | 105 000                |
| 12       | Հավաքարար             | 0.5                | 105 000                |
| 13       | Օժանդակ բանվոր        | 0.5                | 105 000                |
| 14       | Պահակ                 | 1                  | 105 000                |
| Ընդամենը |                       | 11.7               | 1 580 000              |



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնք  
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Բաղրամյան, (0233) 22250, baghramyanhamaynqapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 157-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ  
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ  
ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի  
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետով

*համայնքի ավագանին որոշում է՝*

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան  
համայնքի վարչական տարածքում 2023 թվականի տեղական տուրքի և վճարների  
դրույքաչափը համաձայն հավելվածի:

2. Որոշումը ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -19

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԱՆՏՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՇԱՆԹ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՆՄԱՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԱՆԱՀԻՏ



ԿԱՐՈՅԱՆ ԼԵՌՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՄԱՐԳԱՐ

ՀԱՐԹԵՆՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՀԱՅԿ

ՄԿՐՏՋՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՂԻՇԵ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՄԱՐՈՒԹ

ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՊՈՂՈՍՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ

ՍԱՀԱԿՅԱՆ ՄՈՒՇԵՂ

ՍԱՖԱՐՅԱՆ ՄԱՐԻՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՀԱՆԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ



**ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԴԱՄՅԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ  
ՎՃԱՐՆԵՐԻ**

**I. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ**

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,

- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող



դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.↵

4.1) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4.2) համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.↵

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.↵

5.1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ.



5.2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ մեկ հարյուր հազար դրամ։←

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ։←

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ։←

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ։

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների կամ օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ ←

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ,



- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

բ. օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ «

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև յոթ հազար հինգ հարյուր դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ.

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, գվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ,

բ. հանրային սննդի և գվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ,

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ իննիսուն հազար դրամ,

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ,

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ,

զ. վիճակախաղերի համար՝ մեկ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ «

ա. հիմնական շինությունների ներսում՝



- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ,

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար հինգ հարյուր դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնմեկ հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնվեց հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանմեկ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսունմեկ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հարյուր դրամ,↵

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ,

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

14) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝ ↵

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ,

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.



15) Հայաստանի Հանրապետության համայնքների կամ համայնքների կազմում ընդգրկված բնակավայրերի խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար՝ երեսուն հազար դրամ:

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ:

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ,

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ,

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ,

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ:

19) համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար երեսուն հազար դրամ:

20) համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար՝

ա. կարաոկեի, դիսկոտեկի, բաղնիքի, սաունայի և շոգեբաղնիքի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում տասնհինգ հազար ՀՀ դրամ,

բ. հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ համայնքի վարչական տարածքում մեկ հարյուր հազար ՀՀ դրամ,

1. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են հաշվարկվել 0.3, 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, քաղաքային բնակավայրերում՝ 0.5 կամ 0.75 գործակիցների կիրառմամբ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Սույն հոդվածով սահմանված դրույքաչափերը քաղաքային բնակավայրերում համայնքի ավագանու որոշմամբ կարող են սահմանվել 1.5 անգամ, բացառությամբ 1-ին մասի 1-3-րդ կետերի:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերի համար կարող են հաշվարկվել 0.3, գյուղական այլ բնակավայրերի համար՝ 0.5, քաղաքային այլ բնակավայրերի համար՝ 1.0-3.0, գործակիցների կիրառմամբ:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափը Երևան քաղաքում՝ ավագանու որոշմամբ, ըստ գոտիավորման, կարող է սահմանվել մինչև 5.0 անգամ, իսկ «բ» ենթակետով սահմանված դրույքաչափը՝ մինչև 10.0 անգամ ավելի:



## II. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

### 2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը.

- 1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:
- 2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ տաս հազար դրամ:
- 3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել հինգ հազար դրամ:
- 4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:
- 5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ հինգ հազար դրամ:
- 6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ մեկ հազար դրամ:
- 7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝
  - ա) ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ հիսուն դրամ:
  - բ) Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման ծառայությունների համար ամսական քսան դրամ,
  - գ) Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայությունների համար յուրաքանչյուր մեկ մետր քառակուսի մակերեսի համար ամսական տաս դրամ,
  - դ) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար յուրաքանչյուր մեկ մետր քառակուսի մակերեսի համար ամսական հինգ դրամ,
  - ե) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ համար յուրաքանչյուր մեկ մետր քառակուսի մակերեսի համար ամսական երկու դրամ:
- 8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև



աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը համայնքի ավագանին սահմանում է մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ:

9) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել ամսական  
ա.մեկ անձի համար՝ երեք հազար դրամ:

10) համայնքային ենթակայության արտադարոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

ա. մեկ անձի համար՝ երեք հազար դրամ:

11) խմելաջրի մատակարարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով՝ .

ա. Զրաչափական սարքավորումներով կահավորված համայնքում 1մ.խ 100 ՀՀ դրամ

բ. Առանց ջրաչափական սարքավորումներով համայնքներում 1շնչի հաշվարկով

100 ՀՀ դրամ

12) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ զրո դրամ փոխհատուցման վճար.

13) համայնքն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ՝ փոխհատուցման գումարի չափով:

ա) Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն-հինգ հարյուր դրամ :

բ) Ծննդօգնություն

թեթև միջամտություն մեկ հազար դրամ,

ծանր միջամտություն հինգ հազար դրամ:

գ) Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականիսարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)

Մանր կենդանի մեկ հարյուր դրամ:

Խոշոր կենդանի երկու հարյուր դրամ:

դ) Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ երկու հարյուր դրամ:

ե) Ախտահանություն՝ 1 քառ. մետրը երկու հարյուր դրամ:

զ) Միջատազերծում (դեզինսեկցիա) 1 քառ. մետր մեկ հարյուր դրամ:

է) Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) 1 քառ. մետր երկու հարյուր դրամ:

ը) Արհեստական սերմնավորում՝ յոթ հազար երկու հարյուր դրամ:

